**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 09.10.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ԳԲՔԱ-LO-2020/107

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76» ծածկագրով բաց մրցույթ, դեղորայքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 24.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.09.2020թ.-ին:

24.09.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 համարի ծածկագիրը:

01.10.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 01.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

**2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 24.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«1.1 «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգ:*

*1.2 Հայտերի բացման օր է նշանակված 24.09.2020թ, ժամը 12:00:*

*1.3 ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:»*

*Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:*

*Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*2. Գնման առարկայի բնութագրերը՝*

*1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար,*

*2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը,*

*3) պետր է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը,*

*4) ներառում են գնման առաըկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբա-նությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:*

*4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:»*

*5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին,*

*ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

*Ուսումնասիրելով ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագիրն արձանագրում ենք, որ այն չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին, որն էլ բերելու է նույն օրենքի 3-րդ հոդվածի խախտման:*

*Պատվիրատուն տեխնիկական բնութագրով ցանկանում է ձեռք բերել «յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ պլաստիկե սրվակ 100մլ»:*

*Պատվիրատուն նշելով, որ պահանջվող լուծույթը պետք է լինի պլաստիկե սրվակով՝ սահմանափակում է նույն պահանջված լուծույթը ապակե սրվակով հավանական մատակարարների մասնակցությունը:*

*Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար:*

*Վիճարկվող տեխնիկական բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված չէ, և արդյոք համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվելու է տվյալ գնումը: Ներկայացված տեխնիկական բնութագիրն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:*

*Պահանջը, որ պահանջվող լուծույթը պետք է լինի պլաստիկե սրվակով, որևէ ողջամիտ հիմնավորման մեջ չի դրսևորվում:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ....»:*

*Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:*

*Իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների*

*մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացվան համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):»:*

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 01.10.2020թ.-ի ներկայացված պատասխան-դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ծանոթանալով պատվիրատուի դիրքորոշմանը հայտնում ենք, որ ըստ էության ներկայացված օրենսդրական, մեջբերումը մեկնաբանվել է սուբյեկտիվ և տրոհված՝ կարգավորվող կոնտեքստից, քանի որ ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում բացի պլաստիկե տարայով ներկայացված դեղանյութից առկա է նաև ապակե տարայով յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մդ յոդ/մլ 100մլ նույն պահանջվող դեղանյութը այլ երկրի արտադրության: Ուստի պատվիրատուն չի մեկնաբանում, թե ինչ, դրդապատճառներից ելնելով է պահանջում միայն պլաստիկե տարայով դեդանյութը, այլ ոչ թե նաև ապակե տարայով: Այսինքն տեխնիկական բնութագիրը պետք է ներկայայվեր կամ-կամ ձևաչափով, որի դեպքում չէինք քննարկի ներկայացված բողոքը:*

*Պատվիրատուն տեխնիկական բնութագրով պահանջում է պլաստիկե տարայով ապրանքատեսակը Իռլանդական արտադրության, որը նշանակում է, որ կարող են մասնակցել միայն սահմանափակ մատակարարներ, որը հիմք է տալիս օբյեկտիվ եզզրահանգման, որ այլ արտադրատեսակով մասնակցություն չեն կարող ունենալ այլ հնարավոր մասնակիցներ, որով էլ դրսևորվում է մասնակցության սահմանափակումը:»:*

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 05.10.2020թ.-ի ներկայացված մեկ այլ պատասխան-դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի կողմից 09.09.2020 թվականին հայտարարած (հայտերի բացման օր 24.09.2020թ.) ՆՍԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգի դեմ ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 բողոքի 01.10.2020թ կայացած լսման առնչությամբ պատվիրատուն 02.10.2020թ թիվ 08-383 գրությամբ հայտնում է, որ «Աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով չի կարողացել ապահովեց իր ներկայացուցչի մասնակցությունը 01.10.2020թ նիստին:»*

*Բողոքի առնչությամբ նշանակված նիստին մասնակցություն ունենալը նույնպես պատվիրատուի աշխատանքի մի մասը պետք է որ կազմեր: Գրության բովանդակությունից կարելի է եզրահանգել, որ միտումնավոր չի ներկայացել լսմանը, որպեսզի հետագայում, տևական մտորումներից հետո, ներկայացնի այն գրությունն ինչին անդրադառնում եմ:*

*Յուրաքանչյուր տեսանկյունից դիտարկելով պատվիրատուի «մտքերը» անթույլատրելի է, բարոյականության սահմանազանցմամբ շահարկել յուրաքանչյուր հայի և*

*նրա հայրենիքի համար մեր օրերի ամենազգայական իրավիճակը, և այդ ամենին պատվիրատուն դիմում է ելնելով իր շահից և իր անօրինականությունը քողարկելու, օրինականցնելու նկատառումից:*

*Հարց եմ հղում, արդյոք պատվիրատուն դեռևս 09.09.2020 թվականին ներկայացված հրավերի ժամանակ գիտեր 27.09.2020 թվականին ծավալվող պատերազմի մասին:*

*02.10.2020թ թիվ 08-383 գրությամբ պատվիրատուն հայտնում է, որ «Նիստի ժամանակ բողոքաբերը չի պատասխանել այն հարցին, թե որ երկրի արտադրանք է ապակե տարայով լուծույթը, պատճառաբանելով, որ ծագման երկիրը նշելը կարևոր չէ: ... Գրանցված 2-րդ տարբերակի մասին ամբողջական ինֆորմացիա ստանալու համար Ձեզ ենք տրամադրում դեղերի պետական ռեստրի քաղվածքը, որտեղ շատ հստակ երևում է որ ապակե շշիկով թողարկվող նույն ազդող նյութով գրանցված դեղի ծագման երկիրը Թուրքիան է»:*

*01.10.2020թ նիստի ժամանակ այո չենք հայտնել ծագման երկիրը հենց այն պարզ պատճառով, թե ինչպիսի ժամանակներ է ապրում Հայաստանի Հանրապետությունը, Արցախը և հայ ժողովուրդը:*

*Մինչդեռ, պատվիրատուն իր դիրքորոշմանբ ևս մեկ անգամ վկայակոչում է այն ինչը հայտնի և հասանելի է բացառապես բոլորին, որ այդ դեղանյութը, թեկուզ և արտադրված Թուրքիայում, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղ է, ծագման մասին ինֆորմացիան հասանելի է բոլոր նրանց համար ովքեր համացանցում որոնման արդյունքում կարող են տիրապետել, ուստի չունի որևէ հիմք դիտարկելու, որ բողոքաբերը միտումնավոր չի հայտնել արտադրող երկրի անունը:*

*Միևնույն ժամանակ պատվիրատուն հավաստում է, որ ապակե տարրայով դեղը նույն ազդող նյութն է, միակ տարբերությունը տարրան է, որը չի կարող ազդել բուժման արդյունքի վրա:*

*Պատվիրատուն հայտնում է, որ «Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, օրվա հրամայականն է հարցը դիտարկել նաև այլ ասպեկտում, նամանավանդ, որ պատվիրատուն պահպանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածի պահանջները: Պատվիրատուն է որոշում, թե ինչ ապրանք ձեռք բերի և միջոցների տնտեսման և մրցակցային պայմաններով այն ձեռք բերելու համար նախաձեռնում է գնման մրցակցային ընթացակարգ: Գնման գործընթացի հրապարակային կազմակերպման պարագայում*

*առավել քան անտրամաբանական է հնչեցնել կարծիք, որտեղ օգտագործվում է «ինչ-որ քողարկված մոտեցումներ» արտահայտությունը:»*

*Այն, որ «օրվա հրամայականի» կոնտեքստով պատվիրատուն ցանկանում է ազդել բողոքի քննության արդյունքի վրա նույնիսկ չի փորձում թաքցնել:*

*Պատվիրատուն «օրվա հրամայական» եզրույթով հանդես գալով, անուղղակի կերպով ընդունում է, որ հրավերի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում օրենքին, չի ապահովում մրցակցություն և ստեղծում է խոչընդոտներ հնարավոր մասնակիցների համար, սակայն պետք է բողոքը մերժել իր նկատի ունեցած հրամայականից ելնելով:*

*Պատվիրատուն մոռանում է, որ պետական միջոցներով իրականացվող գործընթացի ապահովման ժամանակ իր որոշումները պետք է կայացվեն բացառապես օրենքով հիմնավորման դեպքում, այլ ոչ սուբյեկտիվ նկատառումներից ելնելով և օրենքի կարգավորումը տրոհված, մեկուսի «մեկնաբանելու» սովորույթային գործելաոճով:*

*Այսօր, մարդկային ողջամտությունը չի կարող տրամաբանել, թե ինչպես կարող են սպիտակ բանակի ներկայացուցիչներն օգտագործել մեր երկու հայրենիքների պատերազմական վիճակը սույն բողոքի քննարկման հարցում իրենց ենթադրյալ հաջողությունն ունենալու համար:»:*

**3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 24.09.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14459-2020 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստին, 25.09.2020թ.-ին թիվ 08-361 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 բողոքի, հայտնում ենք հետևյալը.*

*Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» ՀՀ օրենքից և իրավական այլ ակտերից:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 497-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է հետևյալը.*

*«Եթե օրենքով սահմանված կարգով նախատեսվում են տարային և (կամ) փաթեթին առաջադրվող պարտադիր պահանջներ, ապա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող վաճառողը պարտավոր է ապրանքը գնորդին հանձնել այդ պահանջներին համապատասխանող տարայով և (կամ) փաթեթով»*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), 13-րդ հոդվածի*

*1-ին մասը սահմանում է հետևյալը.*

*«Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*3-րդ մասը սահմանում է հետևյալը.*

*«Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:»*

*ՀՀ կառավարության 03.05.2013թ. թիվ 502-Ն որոշման հավելվածով սահմանվել են պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները: Համաձայն որոշման 3-րդ կետի.*

*«Դեղերի գնման ընթացակարգերի հրավերներում գնման առարկա հանդիսացող դեղերի գնման տեխնիկական բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող դեղերին ներկայացվող հետևյալ պահանջները*

*1) դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր (գեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները, դեղաձևը, դեղաչափը: Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և հնարավոր մասնակիցների համար ապահովվեն մրցակցության հավասար պայմաններ (հիմք՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան (ռեեստր).*

*4) թողարկման ձևը նշելիս նկարագրվում են արտաքին ձևավորման բնութագրիչները (օրինակ՝ ապակե և այլն (հիմք Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյան»:*

*Ընդհանրացնելով մեջբերված օրենսդրական ակտերի դրույթները ակնհայտ ապացուցվում է որ դեղամիջոցի գնման ժամանակ պատվիրատուն պետք է հստակ նշի ինչպես դեղամիջոցի միջազգային անվանումը, դեղաձևը և դեղաչափը, այնպես էլ թողարկման ձևը: ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ընթացակարգի գնման առարկա հանդիսացող դեղը պայմանագրի նախագծում նկարագրվել է հենց այդ պայմաններին համապատասխան և «պլաստիկե սրվակ 100մլ» բնութագրիչը հենց ՀՀ դեղերի գրանցամատյանով նախատեսված թողարկման ձևն է:*

*Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ սահմանափակվել է մասնակիցների հնարավոր մասնակցությունը նշված գնման ընթացակարգին, ապա նշենք, որ ցանկացած անձ իրավունք ունի ներկրելու և վաճառել դեղերի գրանցամատյանում գրանցված ցանկացած դեղամիջոց և հրավերով նախատեսված ապրանքի մասով որևէ մեկը չունի Հայաստանի Հանրապետություն ներկրման կամ վաճառքի միանձնյա իրավունք:»:*

Պատվիրատուն 02.10.2020թ.-ին թիվ 08-383 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Ի լրումն ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 բողոքի, հայտնում ենք հետևյալը.*

*«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, այսուհետ «Պատվիրատու» պատշաճ կերպով ծանուցված է եղել «Մեգիէլ» ՍՊԸ կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ընթացակարգի վերաբերյալ 24.09.2020թ. ներկայացված բողոքի քննության վերաբերյալ նիստի օրվա և ժամի մասին, իր դիրքորոշումը 25.09.2020թ. ներկայացրել է գրավոր, սակայն աշխատանքային գերծանրաբեռնվածությունից ելնելով չի կարողացել ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը տվյալ նիստին: Պատվիրատուն նիստին հետևել է առցանց, ծանոթացել բողոքաբերի դիրքորոշմանը և դրա հետ կապված ներկայացնում է իր տեսակետը:*

*Նիստի ընթացքում Ձեր կողմից հնչեց հարցադրում, թե ինչ ծագման է դեղերի պետական ռեեստրում գրանցված 2-րդ տարբերակը, բողոքաբերը հարցը թողեց անպատասխան պատճառաբանելով, որ ծագման երկիր նշելը կարևոր չէ, սակայն միևնույն ժամանակ մի քանի անգամ շեշտադրեց հրավերով նշված երկրի անունը: Գրանցված 2-րդ տարբերակի մասին ամբողջական ինֆորմացիա ստանալու համար Ձեզ ենք տրամադրում դեղերի պետական ռեեստրի քաղվածքը, որտեղ շատ հստակ երևում է, որ ապակե շշիկով թողարկվող նույն ազդող նյութով գրանցված դեղի ծագման երկիրը Թուրքիան է:*

*Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, օրվա հրամայականն է հարցը դիտարկել նաև այլ ասպեկտում, նամանավանդ, որ Պատվիրատուն պահպանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածի պահանջները: Պատվիրատուն է որոշում, թե ինչ ապրանք ձեռք բերի և միջոցների տնտեսման և մրցակցային պայմաններով այն ձեռք բերելու համար նախաձեռնում է գնման մրցակցային ընթացակարգ: Գնման կազմակերպման պարագայում առավել քան անտրամաբանական է հնչեցնել կարծիք, որտեղ օգտագործվում է «ինչ-որ քողարկված մոտեցումներ» արտահայտությունը:»:*

Պատվիրատուն 02.10.2020թ.-ին թիվ 08-383 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Ի պատասխան ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից 05.10.2020թ. ներկայացված գրությանը.*

*Վերոնշյալ ծածկագրով բողոքի վերաբերյալ <<Նորք Մարաշ բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն օրենսդրական հիմնավորումների մասով արդեն իսկ հայտնել է իր տեսակետը և հիմնավորել բողոքի առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագրի օրենքին համապատասխան կազմված լինելը: 02.10.2020թ. 08-383 գրությամբ պատվիրատուն*

*ներկայացրել էր տեղեկատվություն 01.10.2020թ. նիստի ընթացքում անպատասխան մնացած հարցադրման մասով:*

*Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից 05.10.2020թ. գրությամբ նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը օրենքին անհամապատասխան կազմված լինելուն, մրցակցության, հնարավոր մասնակիցների մասնակցության համար խոչընդոտներ ստեղծելուն, ապա մեկ անգամ ևս տեղեկացնում ենք, որ այն կազմված է ՀՀ կառավարության 03.05.2013թ. թիվ 502-Ն որոշման համաձայն, որտեղ հստակ նշված են դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները. դրանցից մեկը վերաբերում է դեղի թողարկման ձևին, իսկ թողարկման ձևը նկարագրելիս նշվում են արտաքին ձևավորման բնութագրիչներ, ուստի միևնույն ազդող նյութ ունեցող, սակայն տարբեր թողարկման ձև ունեցող ապրանքները համարվում են տարբեր բնութագիր ունեցող ապրանքներ:*

*Ինչ վերաբերում է <<օրվա հրամայական>> եզրույթին, ապա պատվիրատուն հայտնել է անթաքույց դիրքորոշում ՝ առանց որևէ <<ազդեցության>> նպատակի, քանի-որ հստակ գիտակցում է բողոքը քննող անձի գործառույթները:*

*Բողոքաբերը 05.10.2020թ. <<ծավալուն>> գրությամբ հայտնել է իր դիրքորոշումը. պատվիրատուն ուղղակի չի անդրադառնա դրան՝ հարգելով կարծիք հայտնելու իրավունքը, փոխարենը հպարտությամբ կշարունակի ծառայությունը Սպիտակ բանակի շարքերում՝ Հայրենիքի համար այս դժվարին ժամանակաշրջանում:»:*

**4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 09.09.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 24.09.2020թ.-ին:

iii. Մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում՝ 400 սրվակ յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակ 100մլ: *«Բնութագրերում*

*ծագման երկրին կատարված հղման հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը: Մատակարարման ժամկետները և քանակները՝ պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2020թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների: Ապրանքի (կամ դրա մի մասի)՝ առաջին խմբաքանակի մատակարարումը: Գնորդը չի կարող պահանջել ավելի շուտ քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրում, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով:*

*Վաճառողը ապրանքի հետ միասին պետք է ներկայացնի ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը: Ապրանքները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված պահանջներին: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:»:*

iv. Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն, դեղերի պետական ռեեստրի՝ www.pharm.cals.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցամատյանում յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակ 100մլ անվամբ գրանցված է մեկ կազմակերպություն (արտադրող երկիրն՝ Իռլանդիա), իսկ յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, ապակե սրվակ 100մլ անվամբ՝ նույնպես մեկ կազմակերպություն (արտադրող երկիրը՝ Թուրքիա):

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված է «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով 09.09.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76» ծածկագրով բաց մրցույթ հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում՝ 400 սրվակ յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակ 100մլ:

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն, դեղերի պետական ռեեստրի՝ www.pharm.cals.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցամատյանում յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, պլաստիկե սրվակ 100մլ անվամբ գրանցված է մեկ կազմակերպություն (արտադրող երկիրն՝ Իռլանդիա), իսկ յոհեքսոլ լուծույթ ներարկման 350մգ յոդ/մլ, ապակե սրվակ 100մլ անվամբ՝ նույնպես մեկ կազմակերպություն (արտադրող երկիրը՝ Թուրքիա):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/76» ծածկագրով բաց մրցույթի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար ապահովել է մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Բացի այդ, նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Մրցույթը:

Տեխնիկական բնութագրում պլաստիկե սրվակ նշված լինելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ սույն ընթացակարգի Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների խախտմամբ կազմակերպված լինելու համար: Ինչպես և վերը նշվել է սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Այլ կերպ ասած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներն իրենց արտացոլումն են ստացել արդեն նույն օրենքի հատուկ դրույթներում, որպիսի խախտումներ Բողոքներ քննող անձի կողմից չարձանագրվեցին, որպիսիք էլ իրենց հերթին կհանգեցնեին Օրենքի՝ Բողոքաբերի կողմից վկայակոչված 3-րդ հոդվածի (սկզբունքների) խախտմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, իսկ Մրցույթի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 24.09.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/107 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**